զայսմանէ, եւ նա արար պատասխանի. 'ի սիւնաղարդ դաւիթ եկեղեցւոյն այնորիկ երեք քրիստոնեայ ազգք անխտիր մտանեն եւ ելանեն. զի իւրաքանչիւր ոք ունի դուռն եւ ճանապարհ անտի 'ի վանս իւր, եւ ժառանգեն զայն նախ քան զառու�Երուսաղէմի 'ի Սէլիմայ Արքայէ, ըստ զօրութեան վաւերական գրոց։ Իսկ ընդ առաջ լինելն Լատինաց նոր տեսչի իւրեանց, և իջանել նորա յԱյրն Ծընընդեան, է մին 'ի վաղեմի սովորութեանց նոցին, եւ միաբանք Յունաց միշտ հակառակ կացեալ այսմ, յարուցեալ են վէճս և խռովութիւնս, որպէս և յայսմ նուագի բուռն հարեալ 'ի սփոռոցէ անտի 'ի բաց ընկեցին զայն ընդդէմ օրինաց և իրաւանց մերոց։ Սակայն Յոյնք ոչ կամէին հաւատալ և ոչ ունկն մատուցանել բանից նորա. թէ ունիցին Լատինք զայնպիսի սովորութիւնս 'ի տեղւոջ յայնմիկ։ Լուեալ դատաւորին զբանս երկուց ոսոխաց հակառակ միմեանց, հրաման ետ կոչել զերեւելի այլազգիս քաղաքին. ժողովեցաւ անդ բազմութիւն մեծ, և 'ի հարցանել ցնոսա, նոքա ետուն պատասխանի և ասեն. Սիւնաղարդ դաւիթ եկեղեցւոյն այնորիկ՝ ճանապարհ է երից ազգաց, Հայոց, Յունաց և Լատինաց, և ամենայն ոք անարգել մտանէ անդ և ելանէ։ Կոչեցին և զայլազգիս Բեթղեհէմի, և նոքա ըզնոյն ետուն վկայութիւն։ Ասացին եւ վասն ընդունելութեան նոր տեսչին Լատինաց։ Յետ այնորիկ սահմանեցաւ 'ի ժողովի անդ հաճութեամբ Յունաց, բաժանորդութեամբ ունել երից ազգաց զսիւնաղարդ դաւիթ եկեղեցւոյն եւ զԱյրն Ծննդեան Քրիստոսի՝ և բարձաւ վէճն։

Բայց Յոյնք չկարացեալ տանել այսմ, յարուցին զայլ վէճս ընդդէմ Լատինաց և ասեն. 'ի դալստեան կայսերական հրովարտակին, լեալ էր հրաման, յանձնել զամենայն ինչ ազգին Յունաց որ միանգամ գրեալն էր 'ի նմա, մին 'ի բազմաց անտի էր քարուկիր շինուածն եւ պարտէզն, զորս պարտ էր յանձնել Յունաց, զի յառաջագոյն սեփականութիւն նոցին էր, այժմ Լատինք մուծեալ են զայնս 'ի վանս իւրեանց և առանց իրաւանց տիրեալ են բովանդակ վանացն։ Յակնարկել դատաւորին ցԼատինս՝ ետուն պատասխանի. վանքն Բեթղեհէմի 'ի ձեռս Լատինաց է 'ի ժամանակէ անտի Արքային Սէլիմայ մինչեւ ցայսօր ըստ